Grisha Balasanyan marzpet.armavir@mta.gov.am


**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am


---

**21.06.2017թ.**

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն *Աշոտ Ղահրամանյանին*

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
*Գրիշա Բալասանյանից*
Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն Ղահրամանյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում Արմավիրի մարզին կարկուտի հասցրած վնասների մասին: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. 2017թ. ընթացքում որ համայնքներում է կարկուտը պատճառել զգալի վնասներ: *Նշել տեղացած կարկուտի ժամանակահատվածը և տուժած համայնքների անունները՝ ըստ ժամանակահատվածի:*
2. Կարկուտից տուժած համայնքներին որքան վնաս է պատճառվել, ինչ ցանքատարածություններ (այգիներ) են վնասվել, քանի հեկտար: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների և յուրաքանչյուրին հասցրած վնասի չափի՝ դրամային արտահայտությամբ, ցանքատարածությունների (այգիների) չափի:*
3. Հարկուտից տուժած որ համայնքներում են տեղադրված եղել հակակարկտային կայաններ, յուրաքանչյուր համայնքում քանիսն են եղել և որքան է եղել այդ հակակարկտային կայանների արդյունավետությունը: *Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ համայնքների:*
4. Կարկուտից տուժած համայնքներում տեղադրված հակակարկտային կայանները ում կողմից են սպասարկվել:
5. Մարզպետարանն ինչ քայլեր է ձեռնարկել կարկուտից տուժած գյուղացիներին աջակցելու ուղղությամբ:

*Կանխավ շնորհակալություն*

Դիմող՝ *Գրիշա Բալասանյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 094/3680-17
21 06 2017թ.